

ԻՍՊԱՆԻԱՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Ա. Գ. ՀՆԶԱՑՅԱՆ

Մեսրոպյան մատենագրության մեջ Իսպանիան մուտք է գործել Ծ դարում, Աստվածաշնչի թարգմանությամբ: Հոռոմայեցիներին հղած թղթում (ԺԾ 24 և 28) Պողոս առաքյալը խոսում է Իսպանիա կատարելիք ուղևորության մասին: Առաքյալի այդ մտադրությունը կարծես առանձնակի մի իմաստ ունեւր հայ հավատացյալների համար, մանավանդ որ Հայ եկեղեցին իր պատմության արշալույսին արդեն անխզելիորեն կապվեց իսպանականի հետ, ավելի ճիշտ՝ Իսպանիայի հետ, Հակոբոս առաքյալի «միջոցով»: Ըստ ավանդության, առաքյալի գլուխը թաղված է Երուսաղեմի սրբոց Հակոբյանց հայկական վանքում (Գլխադիր), իսկ մարմինը Կոմպոստելայի՝ նույն առաքյալի անունը կրող սրբավայրում: Հնագույն թարգմանությամբ հայ մատենագրության մեջ գոյություն ունի «Պատմութիւն առաքելոյն Յակոբայ, թէ որպէս գնաց ի Սպանիա» պարականոն բնագիրը¹: Բոլոր դարերում հայ ուխտագրեանցները հասել են Արևմտյան Ծվրոպա, իրենց հարգանքի տուրքը մատուցելու առաքյալին: Սակայն, հասկանալի է, բոլոր այցելությունները չէ, որ արտացոլված են մատենագրության մեջ: Ընդհակառակն, դժվար չէ կոահել, որ արձանագրված է այդպիսի ուղևորությունների շնչին մասը միայն:

Գիտական շրջանակներին բավականաչափ ծանոթ են Մարտիրոս Երզնեկացու, Սարգիս Աբեղայի, Օգոստինոս Բաջենցի և ուրիշների ուղեգրությունները², իսկ սրանց մի մասը թարգմանված է այլևայլ լեզուներով, այդ թրվում՝ իսպաներեն³: Քանի դեռ հիմնովին ուսումնասիրված չէ հայոց ձեռագրերի աշխարհը, անգամ ավարտված չէ դրանց ցուցակագրությունը, կարող ենք միայն երթադրել, որ դեռ կհայտնվեն նորանոր տեղեկություններ, նույնիսկ անակնկալներ, որոնք կհարստացնեն մեր պատկերացումները տվյալ խնդրի վերաբերյալ:

Մի կողմ թողնելով միջնադարյան աշխարհացույցների, պատմությունների ու ժամանակագրությունների մեջ հանդիպող հիշատակումները, որոնք ավելի շատ դասագրքային ճշմարտություններ են պարունակում և մեծ մա-

¹ Քանգարան հայկական Հին և Նոր դպրութեանց, Գ, «Անկանոն գիրք առաքելականք», Վենետիկ, 1904:

² Մեզ այստեղ գրադեցնող խնդիրը արծարծված է «Արաքս» հանդեսի մեր մի շարք հրատարակումներում. տե՛ս, օրինակ, «Արաքս», 1995, № 1, էջ 30—31, 1996, № 1, էջ 33—34, 1996, № 2, էջ 63, 1997, № 2, էջ 16—18, 40—41 և այլն: Սույն հաղորդումը պետք է դիտել այդ շարակարգում: Տե՛ս նաև Վարդան Մատթևոսյանի «Հայկական Կիլիկիան և Սպանիան», «Երկու հայ արքայազուներ միջնադարեան Սպանիոյ մէջ» հոդվածները («Արաքս», 1995, № 1, էջ 61—68, 1997, № 2, էջ 48—58):

³ Մասնավորաբար տե՛ս Մարտիրոս Երզնեկացու և Սարգիս Աբեղայի ուղեգրությունների վ. Մատթևոսյանի իսպաներեն թարգմանությունները. «Արաքս», 1995, № 1, էջ 38—44 և 1997, № 2, էջ 42—47:

սամբ փոխառյալ են տարրեր բնագրերից, ուշադրություն դարձնենք «ոչ դասագրքային» մասնավոր դեպքերի ու դեմքերի:

Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանք այցելած ուխտավորների մեջ հաճախ ցանկություն էր արթնանում տեսնելու նաև Կոմպոստելայի ս. Հակոբը: Այդպիսի ուխտավորներից էր Դավիթ Հայկազնը, մի ազնվական, որ հարբստությունը բաժանեց կարիքավորներին, դարձավ կամավոր աղքատ, այցելեց Երուսաղեմ, այդտեղից անցավ Հոռոմ, այնուհետև ճանապարհովեց դեպի Իսպանիա: Բայց հիվանդանալով՝ ընկավ Լուկկա քաղաքի անկելանոցը, երեք օր առաջ գուշակելով իր մահը՝ վախճանվեց 1005 թ. հունիսի 3-ին, և անկատար մնաց Իսպանիա գնալու բաղձանքը: Դավիթ Հայկազնը (San Davido armeno) հիշյալ քաղաքի պահապան սուրբն է, և նրա գերեզմանը հրաշքներ է գործում, բուժում հիվանդներին⁴:

Ավելի ուշ, Ժն դարում կատարված մի ուղևորության մասին տեղեկանում ենք 1476 թ. Աղթամարա կղզում ընդօրինակված «Յայսմաուրքի» գրիչ Աբեղայի հաղորդումից. «... քեռին իմ տէր Սարգիս հեզահոգի և բարեմիտ կրօնաւորն, որ գնաց ի Սպանեայ և ի Լուրիկէ, որ է Եզր աշխարհիս՝ ի սուրբ գերեզմանն, որ ասեն թէ ով ի յայն գերեզմանն երթայ՝ ի դատաստան ոչ մրտանէ, այլ պարգեբես մնայ յաւուրն դատաստանին: Կէ անտի դարձաւ... և եհաս ի Վարագ... և գեղեցիկ անօթիւ, շուրջաօք և պատուական սկօք և խաչերօք և եկեալ աստ [Աղթամար]»⁵: Մեր ընդգծած տողերի աղբյուրը վերելում հիշված պարականոն «Պատմութիւնն» է, ուր կարդում ենք. «Ասի բան թէ սուրբ առաքեալն Յակոբ խնդրեաց ի Քրիստոսէ զի թէ ոք աշխատասիրաբար գնայցէ ի վիճակ իւր և սուրբ գերեզմանն, ինքն իւրովքն հանդերձ ոչ մտցէ ի մեղաց դատաստան՝ այլ փրկի ի յաւիտենական հրոյն և տանջանացըն»⁶:

Բայց Իսպանիան միայն ուխտավորներին չէ, որ հրապուրել է: Քիչ չէին նաև վաճառականներն ու լուսավորական գործիչները, թուրքական և պարսկական գերիշխանությունից Հայաստանի ազատագրության նախանձախնդիրները: ԺՔ դարի հայ ականավոր մտածողներից սկսած (եթե ոչ ավելի վաղ ժամանակներից) հայրենիքի և ժողովրդի ճակատագիրը մշտապես կապել են ընդհանուր քրիստոնեության կյանքի հետ: Ժն դարում արդեն, զգալով, որ քաղաքական ասպարեզ է իջել մի ուժ, որը շարիք կարող է դառնալ ոչ միայն Մերձավոր Արևելքի, այլև ամբողջ մարդկության համար, ժամանակի մտավոր և քաղաքական գործիչները տազնապով դիմում էին Եվրոպայի իրենց հավատակիցներին՝ համագործակցելու ընդդեմ թուրքերի: Այդ ձգտումներին համակամ ու աջակից էր նույնիսկ մահմեդական Իրանը⁷:

1596 թ. օգոստոսի 14-ին Քարթլիի Սիմոն Թագավորը նամակ է հղում Իսպանիայի Ֆրիլայ Բ Թագավորին, հայերեն և հունարեն՝ իր և երկու այլ թագավորների անունից («Աղէքսանդր խան Լուանդինոյ, շահ Արաս Փերսիանին»), թե իրենք միաբանել են, որոշել՝ «զթուրքին զլուխն կոտորենք և ըզսուրբ Երուսաղէմ և զքրիստոնեայքն ի թուրքի ձեռաց ազատենք»⁸:

⁴ Զ. Անաոյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 36:

⁵ Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, Կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 403: Հրատարակիչը ենթադրում է, որ խոսքը Լիբիա (Libia) քաղաքի մասին է, թեպետ այդ տեղանունը կարելի է կարգալ նաև Լուսիկէ:

⁶ «Անկանոն գիրք առաքելականք», էջ 139:

⁷ Մանրամասն տե՛ս Ա. Մաղոյան, Միջնադարյան հայկական պոեմը, Երևան, 1985, էջ 199 և հշ.:

⁸ Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Բ, Երևան, 1959, էջ 75. Հմմտ. «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 3, էջ 220:

Եվրոպայի այցելող հայ ճանապարհորդները հայրենիքի ազատագրության հույսեր էին կապում մանավանդ Իսպանիայի հետ (Փիրզատ, Հովհաննես Արևելցիի և ուրիշներ): Այդպես էին և լուսավորական շարժման գործիչներն ու վաճառականները: Մասնավորապես ժէ դ. նշանավոր հոգևորական և հասարակական գործիչ Թովմա եպս. Վանանդեցին, որ առնվազն երկու անգամ և երկար ժամանակով եղել է Իսպանիայում: Երկրորդ այցելությանը մնացել է ավելի քան մեկ տասնամյակ (1678—1688), ինչպես իրավամբ ենթադրում են ուսումնասիրողները, սոսկ լուսավորական գործունեությանը չէր սահմանափակվում: Թովմա եպիսկոպոսը իր զարմիկների անմիջական գործակցությանը Ամստերդամում կազմակերպել էր հայերեն գրքերի տպագրության գործը: Այլ հրատարակությունների նպատակն էր, նկատել է նշանավոր պատմաբանը, «կրթել և դաստիարակել հայրենասիրական ոգով հայ այն երիտասարդներին ու ընթերցողներին, որոնք, ինչպես ասում էր Թովմա Վանանդեցին, «գտնվում են խավարի մեջ և ապրում են բռնակալական լծի տակ»: Մի հայտնի շափով տպագիր գիրքը պիտի զիներ ընթերցողին մտավոր այն միջոցներով, որոնք անհրաժեշտ էին նրանց գիտակցությունը կաշկանդող խավարը ցրելու և նրանց ազատությունը ճնշող բռնակալության լուծը խորտակելու համար»⁹:

Հետաքրքիր է, որ տարբեր փաստաթղթերում Թովմայի առաքելությունը տարբեր բացատրություն և տարածում էր ստանում: 1685 թ. ապրիլին նա Իսպանիայում էր՝ «դրամ հաւաքելոյ» տպարանի համար, որ գործում էր Ամստերդամում: 1693 թ. հունիսի 26-ին Կոմպոստելայի Անտոն արքեպիսկոպոսը հայտնում էր Հոռմի պապին, թե Թովման դրամ է հավաքում եկեղեցի կառուցելու և իր եղբորը գերությունից ազատելու համար և մտադիր է Կոմպոստելայից անցնել Cougna, որ արևմտահայտիսում է, օվկիանոսի ափին: («Սըբոր ազատագրումն» արդյոք այլաբանական, ավելի ընդարձակ իմաստ չունե՞ր): Գերմանական նշանավոր փրկիսոփա Լայբնիցի՝ 1695 թ. հոկտեմբերի 10-ի նամակում ասվում էր, որ Թովման մտադիր էր տպարանը Ամստերդամից տեղափոխել Հայաստան¹⁰: Այս նպատակի համար ևս դրամ էր հարկավոր: Բայց 1706-ի աշնանը Իսրայել Օրին Ամստերդամում «հայտնի չէ, թե ինչ միջոցներով— զենքի, հանդերձանքի, արծաթե սպասների և մի շարք այլ իրերի գնումներ է արել»¹¹, հավանաբար Վանանդեցիների աջակցությամբ:

Թովմա Վանանդեցու՝ Եվրոպայում ծավալած գործունեությունը մշտապես եղել է Հոռմի Հավատասփյուռի ուշադրության ոլորտում: Արծարծված հարցերի լուսաբանությանը կարող է որոշ շափով նպաստել Թովմայի՝ 1688 թ. մարտի 10-ին Սևրիայից գրած նամակը, որի մեջ, թվում է, ինչ-որ բան քողարկվում էր:

«Սերնօրէ

Մատուցանեմք աղերս դուզնութեայ վասն ցաւալից եւ վշտակիր կենաց իմոց, զի յանցանելն իմ ի կողմանս յայտոսիկ, նեղութիւնք եւ վիշտք անթիւք պատեցին զիս, մինչ զի ո՛չ երբեք կարացի տեսանել զարեւ եւ զուրախութիւն, այլ հստապազօր հիւանդութիւնք եւ հեծութիւնք, գոլով անոք եւ անմըխիթար, անօգնական եւ անայցելու, անկեալ յանկիւնս օսպիտալաց, աստ եւ անդ, անլեզու եւ անխօս կիսամահ, որպէս այն այր, որ իջանէր յԵրուսա-

⁹ Ա. Հովհաննիսյան, *անդ, էջ 171: Հմմտ. Չր. Միրզոյան, XVII դայի հայ փրկիսոփական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1983:*

¹⁰ Sб'и В. Налбандян и др., *Армянская литература, М., 1976, էջ 131:*

¹¹ Ա. Հովհաննիսյան, *անդ, էջ 560:*

ղէմէ յԵրիթով, և որպէս նա եգիտ բժշկութիւն ի ճանապարհորդութեան սամարացոյն, այսպէս և ամենաթշուառս փարիմ զոտիբ մեծութեան Ձերոյ, դթալ ի վերայ մեր և տալ մեզ բժշկութիւն, զօրաւոր ձեռք Ձերովք, և արձակել փութապէս զժառայս Ձեր, զորդեակս իմ զՂուկաս և զՄիքայէլ, զի ձայն դոցա և ձեռն դոցա՝ է բժշկութիւն ամենայն ցաւոց և վիրաց իմոց, որպէս ի հնումն ձայն Յովսէփայ զօրացոյց զնահապետն Յակոբ: Ո՛վ տեարք իմ և վեհք, եթէ դոքա ոչ էին ընտանիք իմ և որդիք, այլ ա՛յլք ոմանք, հեռաբնակ յերկրէ, արժանի էր յղել առ իս, վասն անտանելի վշտաց իմոց. իսկ որովհետեւ դոքա են նեցուկ սրտի իմոյ, մի՛ հեղգայք փոյթ ընդ փոյթ առաքել առ իս, սիրոյ և օրհնութեան և զօրաւոր թղթովք Ձերովք, զի ես մեղաւորս և դոքա որդիք եմք սուրբ Եկեղեցոյն Պետրոսի և հնազանդ յաջորդաց նորա, և մեծութիւն Ձեր մի՛ համարեսցի զմեզ խորթս, այլ իբրև ըզհարազատ որդի Եկեղեցոյ սրբոյ, թէպէտեւ եմք մեղաւոր և աղքատ, և մեծութիւն Ձեր պարտի սիրով և ողջունիւ համբուրել զմեզ, որպէս հայրն զըթած զանառակ որդին, քանզի նարդեանս մեծութիւն և շքեղութիւն Ձեր՝ ունիք զնամանութիւն և զտիպ հօրն զթածի, գոյով հայր և այցելու հասարակաց.

նուաստ թօմաս, պաշտօնեայ մեծի ժողովոյն»¹²:

Սույն նամակի իտալերեն թարգմանությունը մի իսպաներեն հանձնարարականով, որը թովմայի հետ ստորագրել էր «սպանացի կանոնիկոս մը», առաքվում է Հավատասփյուռին, որ նույն թվականի հուլիսի 5-ի նիստում քննում և թողնում է անհետեանք: Միայն երեք ամիս անց, ի պատասխան զարմիկների՝ Ղուկաս և Միքայել Վանանդեցիների աղերսագրի Հավատասփյուռը արտոնում է նրանց մեկնելու Իսպանիա:

Մեզ զբաղեցնող հարցի տեսակետից բացառիկ հետաքրքրական է Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի թանգարանի թ. 2583 (1443 թ. գրչություն) Ավետարանի պարագան: Նախ՝ մատյանը յուրօրինակ մի «ճանապարհորդություն» է կատարել միջնադարյան Եվրոպայում ու վերադարձել Հայաստան: Երկրորդ՝ պարունակում է հայերեն, լատիներեն, հունարեն, իսպաներեն, փորթուգալերեն հիշատակարաններ ու գրություններ: Վերջապես, որ թերևս առավել նշանակալից է, թղ. 5բ իսպաներեն «յայտարարութեան կողքին» կա հայ ճանապարհորդի մի մանրանկար, որ անգլիացի հայագետ Չարլզ Դավուէթի հնթադրությամբ Հովհաննես Աբեղան է: Նա պատկերված է ամբողջ հասակով և ձեռքին առագաստանավի մանրակերտ կա: Եթե ճիշտ է այս վարկածը, մենք ունենք ժՁ դարում իսպանիա այցելած հայ ուղեգրի եզակի մի նկար:

Ձեռագրի մանրամասն նկարագրությունը կատարել է Ռ. Կյուլպենկյանը: Հայերեն հիշատակարանների շարքում հետազոտողի ուշադրությունը գրավել են Հովհաննես Աբեղայի նոթերը, որ թեև շափազանց կարճառոտ են, այնուամենայնիվ հետաքրքրական են որպես Եվրոպա այցելած ճանապարհորդի գրառումներ: Նա ուխտ է գնացել ս. Հակոբի գերեզմանին, հասել Յիսուստերի հրվանդան, անցել Ֆրանսիա, և շատ սուղ խոսքերով նկարագրել Փարիզի Աստվածամոր տաճարը (Նոտր-Դամ):

Նկատի ունենալով մանրանկարում պատկերված վարդապետի սքեմը՝ Ռ. Կյուլպենկյանը ենթադրում է, որ նա «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» կաթոլիկ միաբանության անդամ է եղել¹³:

Ավետարանը 1549 թ. Օրմուզից Փորթուգալիա էր առաքել Յիսուսյան միաբանության անդամ ոմն հայր Գասպար: Հովհաննեսն ինքը ձեռագիրն

¹² Հ. Ս. Ճեմեմեան, Հայ տպագրութիւնը և Հոռոմ, Վենետիկ, 1989, էջ 191:

¹³ «Բանբեր Մատենադարանի», 10, Երևան, 1971. մանրանկարը՝ էջ 363:

ստացել էր 1558 թ., Ինաս անունով հոգևորականից, ըստ երևույթին Լոզանում: Այդ թվականի նոյեմբերի 10-ին լատիներեն, հունարեն և իսպաներեն լեզուներով գրված հայտարարությանը պարզվում է, որ «Յիսուսեան միաբանութեան վարդապետները Աւետարանը տվել են «Յովհաննէս հայազգի վարդապետին, որովհետև ծանօթ է հայերէն լեզուին և պիտի վերադառնայ Հայաստան»:

Ստորև բերում ենք հիշյալ ամփոփ բնագիրը, որ փաստորեն հիշատակարանի բնույթ ունի:

«Ես, տէր Յովհաննէս կուրոր¹⁴, արեղայ ապրակոնեցին¹⁵, մեղաւոր ծառայ Տէր Յիսուս Քրիստոսի, Բ (2) անգամ սր. Յակորոյ առաքելոյ գերեզման գնացի, սահեա (=կրկին անգամ) սուրբ Յակորոյ գնացի ի Պուրթուքալիաց յերկիր, քաղաք առաջին Վիլվամին, Վէնայ քաղաք, Կրէնս քաղաք, Ուլուժ-բոյ¹⁶ քաղաք մեծ ոյ (=ու) զարմանալի, ֆռանկ լեզու՝ Յնրստէո կասեն, հայոց լեզու՝ Յեզր աշխարհի քաղաք: Երբ որ ես՝ տէր Յովհաննէս արեղայս Ուլուժբոյ քաղաք գնացի, նայ Ա (1) քահանայ Յուրմուզեայ երկիր էր (եկեր էր), զայս սուրբ Աւետարանս Յուրմուզայ բերեր էր: նայ ես՝ տէր Յովհաննէս մեղաւոր ծառայս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, խնդրեցի յայն քահանայէն զԱւետարանն. նա ետուր ինձ: Այն քահանային անուն Ինաս կասին. Աստուած իւր արքայութիւն տայ, որ զայս մեղաւոր Յովհաննէս քահանայս, անպիտան ծառայս Յիսուսի Քրիստոսի, այնչափ յարգեաց, զայս սուրբ Աւետարանս ինձ բաշխեց: Ո՛հ, ո՛հ, ո՛հ, Ռ (1000) ո՛հ, որ իմ դառն զարիպութիւն ի Տռանկիստան»¹⁷: Այնուհետև հիշատակադիրը հարում է. «Ես, տէր Յովհաննէս այս Բ (2) անգամ ի Փարէզ քաղաք գնացի: Ի Փարէզ Ա (1) եկեղեցի կայ, Զ (6) զանգակ մեծի ու զարմանալի, ԳՃԺԳ (313) աստիճան ունի, որ կիլուս (=կիլենս)՝ զանկկայ բուրջ (=զանգակի աշտարակը), Բ (2) մեծ զանգակ ունի, ԼԱ (31) թիզ է լայնութիւնն. Ե (5) դուռն ունի Փարէզոյ մեծ եկեղեցին՝ սուրբ Աստուածածին» (անդ, էջ 364):

Իսպանիայի վերաբերյալ բավական հետաքրքրական նյութեր կան հայ գեղարվեստական գրականության մեջ, ուր այս երկիրն անվանվում է Սուրբ Հակոբի երկիր, Սպանիա, Հսպանիա, Սպանեօլ: Վերջինս հանդիպում է ալեյի ուշ շրջանի բնագրերում, ինչպես, օրինակ, Երեմիա Քեոմուրճյանի (ժէ դար) «Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ Օսմանցոց թագաւորացն» շափածո աշխատության մեջ:

Ժէ դարի սկզբին հայրենի Եվզոկիա (Թոխատ) քաղաքից Վենետիկ է մեկնում Խաչատուր Թոխաթցի բանաստեղծը և հիացած հեքիաթային այդ քաղաքով՝ գրում է «Պատմութիւն Վէնէտիկ քաղաքին» ծավալուն քերթվածը: Շատ հայ ուղեգիրների նման Խաչատուրը Վենետիկ այցելեց՝ երբ այդ քաղաքը փառքի գագաթնակետին էր, և նա անկարող էր զսպել հիացքը: Կլանված իր քերթվածի նյութով՝ նա անտարբեր էր դարձել շրջապատի անցուղար-

¹⁴ Հրապարակողը նշել է հարցականով, պետք է կարգալ՝ կրօնաւոր:

¹⁵ Բնագրում՝ ապրանոնեցի: Ռ. Կյուլպենկյանն առաջարկում է կարգալ ապարանցի, նրկատի ունենալով Երեւակի Ապարաներ գյուղը: Սակայն կարելի է վերծանել նվազագույն միջամտութիւնով՝ ապրակոնեցի: Ապրակոնեիսը նույնպես Երեւակի գյուղերից է: Հնդգոված ն պետք է կարգալ Կ, ու թերևս Ո-ից հետո կարելի է ալեյացեցի Ի (հմտ. «Բանքեր Մատենագարանի», 10):

¹⁶ Այս քաղաքների տեղն ու դիրքը, ինչպես խոստովանում է Ռ. Կյուլպենկյանը, ճշտված չէ: Նա ենթադրում է, որ Վենան կարող է լինել Վիանայի նավահանգիստը, իսկ Կրենսը՝ «Գալիսիոյ մէջ գտնուող Օրենս քաղաքը» (էջ 365): Նախորդ էջում նա նշում էր. «Գալիսիայի ամէնէն արևմտեան մասին վրայ կը գտնուի Յինիսթերրայի հրուանդանը»: Հմտ. Մարտիրոս Ծրզնկացու և Սարգիս Աբեղայի ուղեգրովյունները («Արաքս», 1995, № 1, 1996, № 1):

¹⁷ «Բանքեր Մատենագարանի», 10, էջ 361—364:

ձի նկատմամբ, և ընկերները ծաղրանքով են խոսել նրա մասին, նրա ինքնամոտիվությունը համարելով շփազանցված: Վենետիկն ինչ է, որ այդպես զարմացրել է քեզ,— ասել են հաշատուրին:

... Արի գնա Ըսպանիա,
Տես բզմամփուն մեծ ֆաղաֆեն:
Անապոյի, Ալիկուոնա,
Տրօրենցա, Կրոանտուա,
Մարչիլիա ֆրանցիսի,
Ճինէվա՝ մարճանին տեղն է,
Գեղն է նման Վէնէտիկի:
Ցիցիլիա և Ալաման,
Փարէզ ֆաղաֆ, Ըսպանիա...¹⁶

Միջնադարյան ժողովրդական մի երգի մեջ («Տաղ ազնիւ և գեղեցիկ»):
երիտասարդ սիրահարը խոստումներ է տալիս սիրեցյալին՝ երեսը տեսնելու
կամ ձայնը լսելու համար: Խոստացված քաղաքները արջկա սրտով շեն, վա-
յել շեն նրան Շամն ու Մըսըրը, Բաղդատն ու Բասրան, և նա առարկում է.

Կու տաս՝ Ստամպոլ տուր ինձ,
Վէնէտիկ կամ ԲՍպանիա,
Կամ յեզր Աստուածածին,
Որ շինուեր է Կուկիանեայ:

Թվարկումներից երևում է, որ Իսպանիայի քրիստոնեական սրբավայրե-
րը Հայաստանում հայտնի էին ու հեղինակավոր: Նշվում է մասնավորաբար,
որ ս. Հակոբի գերեզմանից բացի Կոմպոստելայում նաև այլ սրբերի «մար-
մին կայ»¹⁸:

Կարապետ վ. Բաղիշեցու «Ոտանաւոր ասացեալ ի վերայ որդոցն Նոյի,
որ բաժանեցին զաշխարհքս վեց բաժին» քերթվածի մեջ հարգանքով է խո-
սում Իսպանիայի մասին, որովհետև այդ երկրի թագավորական իշխանու-
թյան հզորությունը հույս էր ներշնչում, որ սատար են կանգնելու հավատա-
կից արևելցիներին:

... Արժանաժառանգ ունի
թագաւորն սպանիական,
Արֆայից մեծաց թագաւոր,
գոր կազմեաց Սողմոն արֆայն,
Այժմ ինփառատուր է ես
ի քունէդ աշխարհն ամենայն:²⁰

Թերևս առավել ուշագրավ հիշատակություն է Թադեոս Զուլայեցի Սո-
գինյանցի «Տետրակ, որ կոչի Ողբ Հայաստանեայց» գրքում եղածը (Մադ-
րաս, 1791): Հայաստանի ազատագրության ջատագով հեղինակը համոզված
է, որ ծուլամիտները, ապագայի մասին շմտածողները կորչում են, իսկ ով-
քեր առաջնորդվում են իմաստութեամբ, հասնում են մեծ նվաճումների ու
փառքի: Նա կոչ է անում իր հայրենակիցներին՝ հետևելու անզլիացիների օ-
րինակին, որոնք փայլում են իմաստութեամբ ու զորութեամբ: Այնուհետև՝

ԱՍպանիայն ի միտ առէ՛ք՝ գմեր ազգական,
Որպէս եմք մեք, ետք քան զմեզ առանելեան.

¹⁸ Պատմութիւն Փարէզի և Վենայի. Պատմութիւն Վենետիկ քաղաքին, Աշխատասիրութեամբ
Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1958, էջ 285:

¹⁹ Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Կազմեց Աս. Մնացականյան, Երևան,
1956, էջ 273—279, 287 կն:

²⁰ «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը. (XVI—XVII դդ.)», Աշխատասիրութեամբ
Հասմիկ Սահակյանի, հտ. Ա, Երևան, 1986, էջ 206:

Սա հայ մատենագրութեան մեջ բասկերի հայաստանյան ժագման վարկածի՝ մեզ հայտնի առաջին ականարկութիւնն է թերեւ: Այս տեղեկութիւնը հավանաբար բասկերի հետ անմիջական շփման, այսինքն ուշ միջնադարում աշխուժացած ճանապարհորդութիւնների արդիւնք էր: Հայ հեղինակը փաստորեն բասկերին նույնացնում է «խսպանացի» առավել ընդհանուր հասկացութեան հետ. պետք է հիշել, որ բասկերը միջնադարում ավելի լայնորեն էին տարածված Պիրենեյան թերակղզով մեկ²²:

Բասպանիան ոչ միայն ծանոթ էր հայ ճանապարհորդների ուխտագնացութիւններին, որ վաճառականական ուղևորութիւններին, այլև առավել կարևոր հանգամանքով՝ իբրև հավատակից, նույնիսկ «ազգական» պետութիւն, որից օժանդակութիւն և աջակցութիւն էր ակնկալում օտար տերութիւնների գերիշխանութեան տակ հայտնված հայ ժողովուրդը:

А. Г. ГНДЗАЦЯН—Испания в древнеармянской литературе.— Испания была известна армянам со времени формирования армянской литературы. Согласно преданию, голова Апостола Иакова похоронена в армянском монастыре св. Иакова в Иерусалиме, а тело в Компостелле, который всегда для армянских паломников был одной из главных христианских святынь. Они верили, что посетивший могилу апостола очищается перед тем, как предстать перед судом. В научных кругах известны путевые записки Мартироса Ерзнкаци, Саркиса Абега, Августина Бадженца, Пирзата Сисианци, где описываются множество испанских городов и поселений. От паломников не отставали также достигшие Пиренейского полуострова армянские купцы, просветительские деятели, предводители освободительного движения от турецкого владычества.

Посещающие Европу армянские деятели связывали надежды освобождения родины особенно с Испанией. Это обстоятельство нашло свой отклик в художественной литературе. Особый интерес представляют стихи Тадевоса Джугаеци Согинянца, в которых он призывает армянский народ встать на защиту родины по примеру ншей родственницы Испании». Это в армянской литературе первое упоминание об армянском происхождении басков.

²¹ Ե. Նազարյան, Ազրի և սթափման բանաստեղծութիւն. XVІІІ դար, Երևան, 1992, էջ 335.

²² Վ. Սարգսյան, Հայ-բասկյան հիմնահարցի ներածութիւն. «Արարք», 1996, № 2: